# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ -2018/10-1

ք.Երևան «19» «Փետրվար» 2018թ.

Հայաստանի Հանրապետության աշխատակազմը՝ ի դեմս աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Նելսոն Զուլոյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Վիոլա» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Արմեն Մեժլումյանի, որը գործում է _____ Ընկերության-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 (տասնհինգ) օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում,եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 (տասնհինգ)օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում,ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները,իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի,տեսականու,որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այնքանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունքունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով,ծավալներով,ժամկետներում և հասցեով մատակարարված Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում,եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով,ծավալներով,ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն,ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրամասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 25.997.760 (քսանհինգ միլիոնինը հարյուր իննսունյոթ հազար յոթ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո կնքված լրացուցիչ համաձայնագրի հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով արձանագրության ստորագրման պահից 30 բանկային օրերի ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդորում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով

նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա,սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգհարյուրերորդական)տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգտասնորդական)տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական)տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից,եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 **Պայմանագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո լրացուցիչ համաձայնագրի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:**

**Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:**

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներն կնքվել է համաձայնագիր:*

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի,առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում,երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով,որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնագիր կնքելու միջոցով,որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30օրացուցային օրով,բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ)օգուտները (խնայողություններ)կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով,և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ

համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանի որոշելուծվում է:[2]

---

[2] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը» բառերը փոխարինելով «և» բառով:*
*Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| | |
|---|---|
| **ԳՆՈՐԴ**<br>Հայաստանի<br>Հանրապետության<br>առողջապահության<br>նախարարություն<br>ք.Երևան,<br>Կառավարության շենք N3<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի<br>գործառնական<br>վարչություն<br>Հ/Հ 900011105237<br>ՀՎՀՀ 02507171 | ՎԱՃԱՌՈՂ<br>«Վիոլա»ՍՊԸ<br><br>ք.Երևան,Աճառյան փ.2-րդ<br>նրբ.թիվ 3<br>«Ամերիաբանկ»ՓԲԸ<br><br>Հ/Հ 157001092880100<br>ՀՎՀՀ 00801026 |
| ----------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | ----------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ |

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրության չհակասող դրույթներ:

19 02 2018թ.

Հավելված 1
հրամանագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑՑ

Ապրանքի

22 դրամ

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ հոդվածները՝ ըստ ԳՄՍ դասակարգման (CPV) | Անվանումը և ապրանքային նշանը | Արտադրողը և ծագման երկիրը | Տեխնիկական բնութագիրը* | Չափման միավորը | Միավոր գինը /22 դրամ ՀՄՀ ներառյալ/ | Ընդհանուր գինը /22 դրամ ՀՄՀ ներառյալ/ | Ընդհանուր քանակը | Հասցեն | Մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | Ժամկետ ըստ պահանջի, բայց ոչ ավել քան ներկայացված առավելագույն քանակները | | |
| | | | | | | | | | | Պարմանոցի համար հակամարմնային ֆիզնանական միջոցներ նախատեսելուց հետո լաբորատոր հետազոտության կիրառման պահից | | |
| | | | | | | | | | | 80 օրացուցային օր հետո 30 օրացուցային օրվա ընթացքում | 250 օրացուցային օր հետո 30 օրացուցային օրերի ընթացքում, բայց ոչ ուշ քան 15.12.2018թ | |
| | | | | | | | | | | Մատակարարման ենթակա առավելագույն քանակը | | |
| 1 | 33141176/309 | ՄԻՆ մեծաքով ՄՈՒՎ-ի հակամարմինների (HIV Ag/Ab) հայտնաբերման թեստ-հավաքածու | "ՌՈՍՍԻՈՅ-ՊՐՈՄՍՏՐՈՅ" ՍՊՄ "Պարսատ-Պրոմստրոյ" ՍՊՄ "Լաբորատորնոյե սիստեմի" Ռուսաստանի Դաշնություն | 96 թեստ պարունակող առանձին տեսակներից պետք է լինեն ամբողջությամբ օգտագործման համար պատրաստի վիճակում: Մեկուսացված հակամարմինները պետք է լինեն 96 գրիչ ունեցող վիճակում, կոնցենտրացիան լինի ոչ պակաս քան, դրական և բացասական ստանդարտ, կոնտրոլ 1, կոնտրոլ 2, կոնտրոլ 3-ի հոսքային լուծույթ, բուֆեր/տարբերակում, գլուտարի ՊՀՏ, տեսանելի կոնտրաստը ոչնչանա: Բեկինգում երբ թեստն պետք է պատրաստի լինի բ24 հանձնել Լաբորատոր հետազոտությունների և տեղեկատվական ապահովագրության: Հավաստագիրի Ի պարտ պրոգրամում և պարտ ֆինանսում ՄՈՒՎ-ի բ-24 հանձնել, ՄՈՒՎ 1-ի Ռեկոմբինանտ 8 և 0 խմբերը: և ՄՈՒՎ 2-ի հակամարմինների հայտնաբերման համար:<br>Թեստ-հավաքածուն պետք է լիարժեքորեն լինի ԱՀԿ-ի կողմից հավատարմագրված բեստերի ցանկում (WHO list of prequalified in vitro diagnostic products):<br>Զգայունությունը 100%, սպեցիֆիկությունը 'դեսերտների նիշերները հետազոտելիս' նախագծերը 99,99%, սեռային զգայունությունը բառ բ24 հանձնել դրական նախագծի կրկնությունների 2-5 օր/գ-ի ներ Դեռ 0,5 ՄՄ/գ-ից ոչ ավել:<br>Հետևանքը նեղը: Լուսաբանի ցիմեն ոչպակաս: 7ձև ից ոչ ավել:<br>Արտադրողի գրանի ապահովման համակարգի նկատմամբ (ISO, ISO 9001 և ISO 13485 վկայագրերի առկայություն:<br>Պիտանելիության ժամկետի առնվազն 18-ի առկայություն ժամանակացույցի պահին | հատ /թեստ/ | 445 | 23,837,700 | 53,568 | ք. Երևան, Տիտոզդրյան 14/10 (ՀՀ առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ) | 26,784 | 26,784 |
| 2 | 33141176/310 | Ռեակտրոտեստոգրանի արագ թեստ-հավաքածու ՄՈՒՎ-ի հակամարմինների (HIV 1/2 Ab) հայտնաբերման համար | KO BIOLINE HIV-1/2 3.0 Standard Diagnostics,Inc Դանդանի Կորեա | Ռեակտրոտեստոգրանի արագ թեստ-հավաքածու: Հավաստագրված է ամբողջական արյան մեջ, արյան շիճուկում և պլազմայում ՄՈՒՎ 1-ի և ՄՈՒՎ 2-ի հակամարմինների հայտնաբերման համար: Թեստն սենսոր կոտորակն: Հավաքածուն պետք է պատրաստի հոսքային բաժին:<br>Զգայունությունը՝ 100%, սպեցիֆիկությունը նախագծից՝ 99.1%: Արդյունքի վերծանման ժամանակահատվածը՝ 10-20 բոլոր հանգամանքների ներառումներ: 9-10"ն:<br>Թեստ-հավաքածուն պետք է լիարժեքորեն լինի ԱՀԿ-ի կողմից հավատարմագրված բեստերի ցանկում WHO list of prequalified in vitro diagnostic products:<br>ISO 13485 որակի վկայագրի առկայություն:<br>Հանգամանքների ժամկետը առնվազն 12 ամիս: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն ժամանակացույցի պահին | հատ | 432 | 2,160,000 | 5,000 | | 5,000 | - |

ԳՆՈՐԴ

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն
ք. Երևան, Կառավարության 2ՇՇ/ 3/1
ՀՀ ՖՆ գանձապետական վարչություն
Հ/Հ 900011105237
ԿՈԴ 02507171

/ստորագրություն/

ՎՃՌԱՎՈՐ

«Վիոլա» ՍՊԸ
Ք.Երևան, Զեյթունի թ. 2-րդ նրբ. 3
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 15700010928860100
ԿՈԴ 00801026

/ստորագրություն/

19 02 Հավելված N2
20 18թ.կնքված
ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 33141176/309 | ԻՖԱ մեթոդով ՄԻԱՎ-ի հակածին/հակամարմինների (HIV Ag/Ab) հայտնաբերման թեստ-հավաքածու | | | | | | | | | | | | |
| 2 | 33141176/310 | Իմունաքրոմատոգրաֆիկ արագ թեստ-հավաքածու ՄԻԱՎ-ի հակամարմինների (HIV 1/2 Ab) հայտնաբերման համար | | | | | | | | | | | | |

*Գումարները ներկայացված են աճողական կարգով

**ԳՆՈՐԴ**
Հայաստանի
Հանրապետության
առողջապահության
նախարարություն
ք.Երևան,
Կառավարության շենք N3
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական
վարչություն
Հ/Հ 900011105237
ՀՎՀՀ 02507171

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«Վիոլա»ՍՊԸ

ք.Երևան,Աճառյան փ.2-րդ
նրբ.թիվ 3
«Ամերիաբանկ»ՓԲԸ

Հ/Հ 1570001092880100
ՀՎՀՀ 00801026

/ստորագրություն/
Կ.Տ

13 02 Հավելված N3
2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ _____ |
| _____ | _____ |
| հվհհ _____ | հվհհ _____ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«  » «  » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝Պայմանագիր/անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____»«_____»20թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, հիմք ունենալով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____»«_____»20թ. կազմված՝գնման հայտը նախագծած ներկայացուցչի N_եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալ մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքն ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն,անուն | ազգանուն,անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

13 02 Հավելված 3.1
2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____
պայմանագրի արդյունքը գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու
վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ._____-ին կնքված N_____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ._____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծածներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ <<ՎԻՈԼԱ>> ՍՊԸ-Ի ՄԻՋԵՎ 19.02.18թ. ԿՆՔՎԱԾ <<ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/10-1>> ԾԱԾԿԱԳՐՈՎ <<ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ>> ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան <<23>> Մարտի 2018թ.

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար Ն.Զուլոյանի մի կողմից, և <<Վիոլա>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Ա.Մեժլումյանի, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով 19.02.18թ. կնքված <<Բժշկական նշանակության ապրանքների>> ձեռքբերման <<ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/10-1>> ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.1, 8.5 և 8.13 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1.1 Պայմանագրի Հավելված 1-ում՝ <<Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց>>-ում կատարել փոփոխություն՝ համաձայն սույն Համաձայնագրի Հավելված 1-ի:

1.1 Պայմանագրի Հավելված 2-ում՝ <<Վճարման ժամանակացույց>>-ում կատարել փոփոխություն՝ համաձայն սույն Համաձայնագրի Հավելված 2-ի:

2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

4. Համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ առողջապահության նախարարություն | <<Վիոլա>> ՍՊԸ |
| Ք.Երևան, Կառավարական տուն 3 | Ք.Երևան, Աճառյան 2-րդ նրբ. 3 |
| Հ/Հ 900011105237 | Հ/Հ 1570001092880100 |
| ՀՎՀՀ 02507171 | ՀՎՀՀ 00801026 |
| ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Ն.Զուլոյան | Տնօրեն՝ Ա.Մեժլումյան |
| ---------- | ---------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |

Հավելված 1
«19» «Փետրվար» 2018թ. կնքված
« ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/1/10-1» ծածկագրով պայմանագրի

Հավելված 1
«23» «Մայիս» 2018թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ապրանքի | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը և ապրանքային նշանը | Արտադրողը և ծագման երկիրը | Տեխնիկական բնութագիրը* | Չափման միավորը | Միավոր գինը /ՀՀ դրամ ԱԱՀ ներառյալ/ | Ընդհանուր գինը /ՀՀ դրամ ԱԱՀ ներառյալ/ | Ընդհանուր քանակը | Մատակարարման | | | |
| | | | | | | | | | Հասցեն | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից | | Պայմանագրի համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո լրացուցիչ համաձայնագրի կնքման պահից՝ 60 օրացուցային օր հետո 30 օրացուցային օրերի ընթացքում |
| | | | | | | | | | | 60 օրացուցային օր հետո 30 օրացուցային օրերի ընթացքում | 250 օրացուցային օր հետո 30 օրացուցային օրերի ընթացքում, բայց ոչ ուշ քան 15.12.2018թ | |
| 1 | 33141176/309 | ԻՖԱ մեթոդով ՄԻԱՎ-ի հակաթին/հակամարմինների (HIV Ag/Ab) հայտնաբերման թեստ-հավաքածու | "ДС-ИФА-ВИЧ-АГАТ-СКРИН" ООО "Научно-производственное объединение "Диагностические системы" Ռուսաստանի Դաշնություն | 96 թեստ պարունակող տուփով ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: Մեթոդը՝ իմունաֆերմենտային անալիզ (ELISA), 12 ստրիպ x 8 բնիկ: Հավաքածուն պետք է ներառի 96 բնիկ ունեցող միկրոպլանշետ, կոնցենտրիկ լվացող լուծույթ, դրական և բացասական ստուգիչներ, կոնյուգատ I, կոնյուգատ 2, կոնյուգատ 2-ի նոսրացնող լուծույթ, բուֆեր/սուբստրատ, քրոմոգեն TMB, ռեակցիան կանգնեցնող ռեագենտ: Բնիկներում կոշտ ֆազան պետք է պատված լինի p24 հակածնի նկատմամբ հակամարմիններով և ռեկոմբինանտային սպիտակուցներով:<br>Նախատեսված է արյան պլազմայում և արյան շիճուկում ՄԻԱՎ-ի p-24 հակածնի, ՄԻԱՎ 1-ի (ներառյալ M և O խմբերը) և ՄԻԱՎ 2-ի հակամարմինների հայտնաբերման համար:<br>Թեստ-հավաքածուն պետք է ընդգրկված լինի ԱՀԿ-ի կողմից նախաորակավորված թեստերի ցանկում (WHO list of prequalified in vitro diagnostic products):<br>Զգայունությունը՝ 100%, սպեցիֆիկությունը (դոնորների նմուշները հետազոտելիս)՝ նվազագույնը 99,96%, անալիտիկ զգայունությունը ըստ p24 հակածնի որոշվող նվազագույն կոնցենտրացիայի՝ 2.3 պգ/մլ-ից (կամ 0,5 IU/մլ-ից) ոչ ավել:<br>Պահանջվող նմուշը՝ չնոսրացված շիճուկ (պլազմա) 70մկլ-ից ոչ ավել:<br>Արտադրողի՝ որակի ապահովման համակարգի եվրոպական (EC), ISO 9001 և ISO 13485 վկայականների առկայություն:<br>Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին | հատ /թեստ/ | 445 | 23,837,760.00 | 53,568 | ք. Երևան, Տիտոգրադյան 14/10 (ՀՀ առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ ) | 26,784 | 26,784 | - |

| Ապրանքի | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը և ապրանքային նշանը | Արտադրողը և ծագման երկիրը | Տեխնիկական բնութագիրը* | Չափման միավորը | Միավոր գինը /ՀՀ դրամ ԱԱՀ ներառյալ/ | Ընդհանուր գինը /ՀՀ դրամ ԱԱՀ ներառյալ/ | Ընդհանուր քանակը | Մատակարարման | | | |
| | | | | | | | | | Հասցեն | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից | | Պայմանագրի համար հավասարասիան ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո լրացուցիչ հավաձայնագրի կնքման պահից՝ 80 օրացուցային օր հետո 30 օրացուցային օրերի ընթացքում |
| | | | | | | | | | | 80 օրացուցային օր հետո 30 օրացուցային օրերի ընթացքում | 250 օրացուցային օր հետո 30 օրացուցային օրերի ընթացքում, բայց ոչ ուշ քան 15.12.2018թ | |
| 2 | 33141176/310 | Իմունաքրոմատոգրաֆիկ արագ թեստ-հավաքածու ՄԻԱՎ-ի հակամարմինների (HIV 1/2 Ab) հայտնաբերման համար | SD BIOLINE HIV-1/2 3.0 Standart Diagnostics,Inc Հարավային Կորեա | Իմունաքրոմատոգրաֆիկ արագ թեստ-հավաքածու: Նախատեսված է ամբողջական արյան մեջ, արյան շիճուկում և պլազմայում ՄԻԱՎ 1-ի և ՄԻԱՎ 2-ի հակամարմինների հայտնաբերման համար: Թեստի տեսակը կասետային: Հավաքածուն պետք է պարունակի նոսրացնող բուֆեր:<br>Զգայնությունը՝ 100%, սպեցիֆիկությունը նվազագույնը՝ 99,8%: Արդյունքների վերծանման ժամանակահատվածը՝ 10-20 րոպե: Պահպանման ջերմաստիճանը՝ 2-30°C:<br>Թեստ-հավաքածուն պետք է ընդգրկված լինի ԱՀԿ-ի կողմից նախաորակավորված թեստերի ցանկում (WHO list of prequalified in vitro diagnostic products):<br>ISO 13485 որակի վկայականի առկայություն:<br>Պահպանման ժամկետը՝ առնվազն 12 ամիս: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին | հատ | 432.00 | 1,123,200.00 | 2,600 | ք. Երևան, Տիտոգրադյան 14/10 (ՀՀ առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ ) | 2,600 | - | - |
| | | | | | | 432.00 | 1,036,800.00 | 2,400 | | - | - | 2,400 |

**Գնորդ**

**Հայաստանի Հանրապետության**
**առողջապահության նախարարություն**
**ք.Երևան, Կառավարության շենք N3**
**ՀՀ ՖՆ աշխատանքների գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011105237**
**ՀՎՀՀ 02507171**

/ստորագրություն/

L.S.

**Վաճառող**

**«Վիոլա» ՍՊԸ**
**ք.Երևան, Աճառյան փ. 2-րդ նրբ.3**
**«Ամերիաբանկ» ՓԲԸ**
**Հ/Հ 1570001092880100**
**ՀՎՀՀ 00801026**

/ստորագրություն/

L.S.

23 մարտ

Հավելված N 2
2018 թ. կնքված
Համաձայնագիր 1
Հավելված N 2
19 «Փետրվար» 2018թ. կնքված
«ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/10-1» ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 33141176/309 | ԻՖԱ մեթոդով ՄԻԱՎ-ի հակածին/հակամարմինների (HIV Ag/Ab) հայտնաբերման թեստ-հավաքածու | | | | | | | 11.918.880 | 11.918.880 | 11.918.880 | 23.837.760 | 23.837.760 | 23.837.760 | **23.837.760** |
| 2 | 33141176/310 | Իմունաքրոմատոգրաֆիկ արագ թեստ-հավաքածու ՄԻԱՎ-ի հակամարմինների (HIV 1/2 Ab) հայտնաբերման համար | | | | | | | 1.123.200 | 1.123.200 | 1.123.200 | 1.123.200 | 1.123.200 | 1.123.200 | **1.123.200** |

*Գումարները ներկայացված են աճողական կարգով

**ԳՆՈՐԴ**
Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարություն
ք. Երևան, Կառավարության շենք N 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գանձապնական
վարչություն
Հ/Հ 900011105237
ՀԿՀՀ 02507171

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«Վիոլա» ՍՊԸ

Ք.Երևան, Աճառյան փ.2-րդ նրբ. թիվ 3
«Ամերիաբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1570001092880100
ՀԿՀՀ 00801026

/ստորագրություն/
Կ.Տ